


087.1  
—  
r - 34



# ԻՆՉՈՒՄՆԱԿՑՈՒՄՈՒՄ ՄԱՆ ԳԱԼ ՍՈՎՈՐԵՅ

A 8  
22/1



087.1  
p-34

հինգ, ս  
788  
41

ինչպես աշխա-  
տից ման  
զայ առարկա

Մ. Բ. Լ. Բ. Ե.

087.1  
հ-34  
մը

087.11

հ-33

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԵ  
ՄԱՆ ԳԱԼ ՍՈՎՈՐԵՑ

Նկարներն ու շապիկը  
վ. Տ Ա Մ Բ Ի Ե

12/6

Ռուսական յերրարդ իրատի-  
րակարյաւմից բարգավաճա-  
ռ. Հ Ա Յ Յ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ



ԴԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1935


26 APR 2013

16262


ԱՎՏՈՄՈԲԻԼԸ ՅԵՎ ՆՐԱ ՆԱԽՆԻՔԸ



Կյունոյի  
ռոգեսալլը (1769)



Տրեմիսիկի  
ռոգեսալլը (1802)



Գանկոկի  
ռոգեսալլը (1829)



Բենցի  
ավտոմոբիլը (1886)



Գայմերի  
ավտոմոբիլը (1886)



Պեծոյի  
ավտոմոբիլը (1895)

Գ 1 ա վ 1 ի ս տ . 46

Հրատար. № 3212

Տ ի ր ա ժ 5 0 0 0



788

Կ/


Պատ. խմբագիր Ա. Հայրյան

Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան

Հանձ. ե արտ. 26/II 1935 թ. Ստորագրված ե տպելու 17/IV-35

Ստատֆորմատ Բ6 125x176 Գալովեր. № 1185

Տիպոգրաֆիա իմ. Стакчи 1912 թ. ԱՀԿՊԴ Ռոտով նա-Դոնու,




Ավտոբուս  
1910—1914 թթ.



Բեռնատար  
1910—1914 թթ.



Թերեկատրծ ավտոմոբիլ  
1910—1914 թթ.



Ներկայիս  
ավտոբուսը



Ներկայիս  
բեռնատարը




Ներկայիս թերեկա-  
տրծ ավտոմոբիլը

## ՏԱՏԻԿԸ

Ավտոմոբիլը և շոգեմեքենան մոտիկ ազգականներ են: Նրանք միենույն տատիկն ունեն: Այդ տատիկը մինչև այժմ ել կենդանի յէ, բայց վաղուց ե, վոր ման չի գալիս, վորովհետև պառակել ե: 1934 թվին նրա 165 տարին լրացավ:

Նա ապրում է ծերացած մեքենաների կայանում—Փարիզի թանգարաններից մեկում:

Տեսքով նա շատ ծիծաղելի յէ. յերկար, յեռանիվ: Մեջտեղին աթոռ կա, իսկ առջևին՝ շոգեկաթսա: Յերկի շատ զվարճալի յեր նրա վրա նայելը, յերբ



1. Ավտոմոբիլի յեզ ռոգհմենեայի տար—Կյունոյի սայր

նա շարժվում էր. գլորվում է գեղի  
քեզ մի ահագին ծխացող կաթսա,—  
կարծես արգանակ են տեղափոխում  
(նկար 1):

Բայց դուք նրա վրա մի ծիծաղեք,  
նրանից ե առաջացել այն գեղեցիկ  
մեքենան, վորը նկարվում է ներքեռում  
(նկար 2):



2. Ամենավեցին ալտոմոբիլը: Այսպիսի մեքենաներ պետք ե պատրասի ընկ. Ստալինի անվան գործարանը

Զարամիտ մարդիկ ասում են, վոր  
տատիկը յերբեք ման չի յեկել և չեր  
ել կարող ման գալ: Բայց մենք այդ  
չարամիտ մարդկանց չենք հավատում:  
Մենք ինքներս տեսել ենք Փարիզի  
գրադարանում մի հին թերթ — Ու-

Դեցույց։ Ահա թե ինչ ե գրված այդ  
թերթում կյունոյի «կրակի սայլի»  
մասին։

«Այնքան մեծ եր նրա շարժման  
ույժը, վոր հնարավոր չեր ղեկավարել։  
Ճանապարհին պատահած քարե պատը  
հեշտությամբ կործանում եր»։

---

## ՎՈՏՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ

Իսկ սա ինչ հրեշ ե։ Յետևից ինք-  
նայեռի խողովակ, առջեփց՝ ղեկ։ Վե-  
րևում նստում են մարդիկ։ Այդ հրս-  
կան փնչում ե և դողդողում, շար-  
ժում վոտներն ու անիմսերը։

Սա առաջին ավտոբումն ե, վոր սո-  
ղում ե Լոնդոնի մոտ ճանապարհով։

Այս ըանը պատահել է 100 տարի  
առաջ։ Տատիկը վաղուց ե, վոր փակ-  
ված ե թանգարանում։ Նրա կառու-  
ցողը՝ ինժեներ կյունոն թաղված ե  
Փարիզի գերեզմանոցում։ Բայց մյուս  
անգլիացի ինժեներները շարունակում  
են նրա աշխատանքը։

Նորածին թռչնիկների նման գործարաններից դուրս են գալիս անձոռնի շողեսայլեր։ Մեկի խողովակն առջևից ե, մյուսինը՝ յետևից։ Մեկը յերեք անիվ ունի, մյուսը՝ վեց։


Սրանք ապագա շոգեմեքենաներն են։ Նրանք դեռ նոր են ման գալ սովորում։ Նրանց մեջ կան արդեն այնպիսիները, վորոնք մի ժամում վազում են 10 կիլոմետր, անցնում բոլոր հետևակներից։ Մարդիկ նայում են ու զարմանում. սրանք ձեռնածուներ են, վառարանը դրել են անիվների վրա։ Դրանով կարող ես հեռու տեղ գնալ։

Իսկ այդ ժամանակ քաղաքից-քաղաք գնում եյին ահագին հանրակառքերով։ Ամեն մի հանրակառքում լրցվում եյին յերկու տասնյակ ճանապարհորդներ։ Տանիքի վրա նստում եր կառապանը և յերկար խարազանով մտրակում վեց ձիերին։ Նրա կող-

քին նստում եր փոստատարը և փողը փշում։

— Զգուշացեք։ Փոստատար հանրակառքն ե գալիս։

Ծանր հանրակառքը հաճախ ընկնում եր փոսերի մեջ, վեր-վեր եր թռչում, թերվում կողքի վրա։ Կարծում ես թե հենց հիմի շուռ կգա։ Նրա յետևից սաստիկ փոշի յեր բարձրանում



3. Հսկան փնջում ե յեվ դսղբողում

Յեկ ահա այս ճանապարհով վեր-  
ջապես գլուրվեցին շոգեհանրակառքերը։  
Այն հրեշը, վոր նկարված ե այստեղ  
(3 նկար), հենց առաջին շոգեհանրա-  
կառքն ե։ Նրա կառուցողը՝ մեքենա-  
գետ Գորտոնն այսպես եր դատում։  
«Չին վոտներ ունի, իսկ սայլը՝ անիվ-  
ներ։ Վորպեսզի անիվները գլորվեն,  
անհրաժեշտ ե, վոր նախ վոտները  
գնան»։ Յեկ ահա նա իր շոգեսայլին



4. Մեքենագետ Գերենի տոգեհանրակառքը

վոտներ կպցրեց։ Բայց այդ վոտներն  
ընկնում եյին անիվների մեջ խան-  
գարում։

Ահա և մի ուրիշ—մեքենագետ Գեր-  
նեյի հանրակառքը (նկար 4)։ Այս-  
տեղ վոտներ չկան. Գերնեյը ճիշտ եր  
դատել—շոգեսայլին վոտներ պետք  
չեն։ Նա պատրաստեց մի քանի հան-  
րակառք և սկսեց լոնդոնից տեղի մո-  
տիկ գյուղերը մարդիկ տեղափոխել։

Գերնեյի հանրակառքերը զարդար-  
ված եյին, լաքած, ծածկակառքի նման։  
Միայն յետեկից, թնդանոթի փոշաբե-  
րանների նման, ցցված եյին չորս խո-  
ղովակ։ Վեց անիվ ուներ. մի զույգն  
ահագին, մարդու հասակի չափ, յեր-  
կրորդ զույգն ավելի փոքր, իսկ յեր-  
րորդ զույգը՝ շատ փոքր։ Փոքր անիվ-  
ները գնում եյին առջևից, կարծես  
ձիեր՝ սայլակի առջևից։

Յերբ վոր դեկը դեպի աջ եյին  
ծռում, առջևի անիվները դեպի աջ

Եյին գնում ու նրա յետեից ծռվում  
եր և ծանր կառքը։ Շոգեկաթսան ար-  
դեն չեն յերևում, ինչպես Կյունոյի  
սայլինը, այլ թագնված եր թափքի  
մեջ։

Նայիր չորսորդ նկարին։  
Հանրակառքի տանիքի տակ ցցված  
ան ծխատար խողովակների մի ամբողջ  
անտառ, տղամարդու յերկար գլխարկ-  
ներ և փետուրներ։

---

## ԶԻԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՇՈԳԵԿԱԹՍԱ- ՆԵՐԻ ԿՈՒՎԵ

Հինգերորդ նկարում նկարված ե  
շոգեհանրակառքի պայթյունը։ Այս ու  
այն կողմն են թռչում անիմսեր, խո-  
ղովակներ, մարդկային վուճներ ու  
ձեռքեր, լծակներ ու գլխարկներ։

Դեկավարը թռել ե իր նստելու  
տեղից՝ ձեռքից բաց չթողնելով դեկը։  
Գետնի վրա ընկած են պոկված գլուխ-  
ներ։

ՅԵՐԲ ե պատահել այս աղետը։  
Հայտնի յէ, վոր մոտ 1834 թվին  
Շոտլանդիայում տեղի ունեցավ հան-

բակառքի շոգեկաթսայի պայթյուն,  
վորից վնասվեց 5 մարդ:

Իսկ յեթե հավատանք այս նկարին,  
վորը նկարված է յեղել այդ ժամա-  
նակա թերթերում, կնշանակե ողն  
են թռել առնվազը մեկուկես տաս-  
նյակ ճանապարհորդներ:



5. Այս ու այն կտրմն են բռչում անիվներ, ձեռքեր,  
գլուխներ:

Յերկի այս նկարը նկարել է մի  
ուրախ նկարիչ: Նայեցեք. վերևում


աջ կողմից նկարված է ֆրակ հա-  
զած մի մարդ: Նա թռչում է գլուխն  
ի վար, ավելի ճիշտ վոտներն ի վեր,  
վորովհետև գլուխ չունի: Նա ձեռքին  
ձեռնափայտ ունի, գլուխը կորցրել է,  
իսկ ձեռնափայտը կորցնել չի ու-  
զում:

Ինչու յեն այս նկարը թերթում  
տպել:

Նրա համար, վոր հանրակառքով  
վոչ վոր ճանապարհ չգնա:

Շատ թշնամիներ և ատողներ են  
ունեցել շոգեհանրակառքերը: Զըր-  
պարտությամբ և ծաղրով աշխատում  
եյին վոչնչացնել նոր գյուտը:

Գլխավոր թշնամին ճիավոր հանրա-  
կառքերի տերերն եյին: Այն ժամա-  
նակ ճիավոր հանրակառքերն անհա-  
մեմատ շատ եյին, քան շոգեհանրա-  
կառքերը: Յուրաքանչյուր քաղաքում  
կային փոստային կայաններ մեծ-մեծ  
գոմերով և ընդարձակ բակերով: Դար-



6. Մեմնագետ Դանիոկի ողբեկանրակառ, Լոնդոնից  
Պեդտինգսոն տանող նախապարհին:

պասներից հաճախ դուրս եյին գալիք  
մարդկանցով և փոստով ծանրաբեռն-  
ված ծածկված կառքեր։ Այդ կա-  
յանների տերերը շատ հարուստ մար-  
դիկ եյին։

Նրանց դեմ պայքարել դժվար եր։  
Նրանք իրենց հակառակորդի դեմ  
եյին ուղարկում անզլիական կառա-  
վարության և իրենց կառապաններին,  
փոստատարների հետ միասին։

Անզլիական կառավարությունն  
սկսեց շոգեհանրակառքերի համար շատ  
խիստ կանոններ հրատարակել։

#### ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Յուրաքանչյուր շոգեհանրակառքի առ-  
ջևից, 55 մետր տարածության վրա,  
պետք է գնա մի մարդ, ձեռքին կար-  
միր դրոշակ բռնած։ Կառքերի կամ  
ձիավորների հանդիպելիս, նա պետք  
է նախազգուշացնի, թե յետևից շո-  
գեկառք ե գալիս։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻՆ ԽՍՏԻՎ ԱՐԳԵԼ-  
ՎՈՒՄ Ե ՍՊԵԼՈԾՆԵՐՈՎ ՎԱԽԵՋՆԵԼ ՃԻ-  
ԵՐԻՆ: ՄԵՔԵՆԱՅԻց ԿԱՐԵԼԻ յԵ ԳՈՂՈՐՉԻ  
Բաց թողնել այն ԺԱՄ ԱՆԱԿ, յԵՐՔ  
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՃԻԵՐ ՀԿԱՆ:

## ՅԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ՇՈԳԵՄԵՔԵՆԱՅԻ շարժման արա-  
գությունը գյուղում մի ժամում 6  
կիլոմետրից, իսկ քաղաքում՝ 3 կիլո-  
մետրից ավելի չպելի չփետք ե լինի:

Ահա թե ինչպիսի կանոններ են, մի  
սուլիր, մի՛ շնչիր և սողա կրյայի պես:

Դրա վրա պետք ե ավելացնելնաև  
այն, վոր կառավարությունը շոգեմե-  
քենա ունեցողներին տուրքերով խեղ-  
դում եր:

Կառապաններն ու փոստատարներն  
այնքան ել վտանգավոր թշնամիներ  
չեցին:

Սակայն նրանք ել պակաս զգվելի  
բաներ չեցին անում:

Իրենց տերերի հրամանով, նրանք  
փշացնում եյին ճանապարհը, ճանա-  
պարհի վրա քարեր եյին կիտում և  
հաճախ դիմում բուռնցքի և փայտի:

---

## ԿՈՒՎ ՏՈՆԱՎԱՇԱՌՈՒՄ

Մելիշեմ քաղաքում տոնավաճառ  
կար: Հարևան գյուղերից քաղաք Եյին  
հավաքվել շատ ազարակատերեր իրենց  
կանանց և յերեխաների հետ: Կովերը  
բառաջում Եյին, Խեղկատակները  
ճշում Եյին Խեղկատականոցնեղում:

Հանկարծ փողի և մտրակի զարկի  
ձայն լսվեց: Ամբոխին գես ու դեն  
ցըելով, հրապարակով շարժվում եր  
մի փոշոտած հանրակառք: Զիերի բե-  
րանից մարդկանց վրա փրփուր եր  
թափվում:

Դեռ մարդիկ չեյին հանգստացել,  
յերբ մյուս կողմից լսվեց փողի յեր-

կարատե ձայն: Զիաներով հանրա-  
կառքի դեմն եր գալիս մի շոգե հան-  
րակառք: Հանրակառքի վեց ձիերը  
ծառացան և ծածկակառքը գցեցին ամ-  
բոխի վրա:

Այստեղից ել սկսվեց: Կանայք և  
յերեխաները ճշալով դես ու դեն ցրվե-  
ցին: Միբուշավոր ագարակատերերը  
կախվեցին լծափայտից և կանգնեցրին  
սլաքող ձիերին: Կառապանը կառըից  
ցած թռավ և քարով խփեց մեքենա-  
վարին:

Փոստատարը դարձավ դեպի ամ-  
բոխը և գոչեց.

— Շուռ տվեր սատանայի մեքե-  
նան: Ժողովրդին ճնշում ե: Կայծեր  
է ցրում: Յերեկ Խեղլի գյուղում մի  
մարագ այրեց: Տվեր հրդեհողներին:

Սկսեցին շոգեմեքենայի վրա քա-  
րեր նետել, զեկավարի գլուխը պատ-  
ռեցին: Մի ծերունի ճանապարհորդի  
կրծքին քարով տվին:

Ամբոխը շոգեմեքենան փշուր-փշուր  
կաներ, յեթե մեքենավարը ժամա-  
նակին մեքենան առաջ չշարժեր:

Մեքենան շուռ յեկավ, ամբոխի  
միջով անցավ և բաց դարպասով մտավ  
գարեջրի գործարանի բակը: Գործա-  
րանի բանվորները դուռը փակեցին:  
Մեքենավարներն ու բանվորները միշտ  
ընկերներ են:

Ամբոխն սկսեց դռները կոտրատել,  
բայց այդ ժամանակ վրա հասան վոս-  
տիկանները:

Շոգեհանրակառքը գործարանում  
գիշերեց: Իսկ վաղ առավոտյան դար-  
պասից դուրս յեկավ և տանջված ճա-  
նապարհորդներին լոնդոն տարավ:  
Շոգեհանրակառքի առջևի մասում,  
մեքենավարի կողքին, տեղավորվեցին  
յերեք հրացանավոր վոստիկանն:

## ՓՈՔՐ|ՅԵՂԲԱՅՐԸ ՄԵԾ ՅԵՂԲՈՐ ԴԵՄ


Զիերով հանրակառքի և շոգեհան-  
րակառքի կոխվը յերեսուն տարի տևեց:  
Զիերով հանրակառքը հաղթեց: Իհարկե  
կհաղթեր. կառավարությունը նրա  
կողմն եր:

Բայց շոգեհանրակառքը մի ուրիշ  
թշնամի ել ուներ:

Դա շոգեհանրակառքի փոքր յեղ-  
բայրն եր—գնացըը:

1825 թվին ինժիներ ՍՏԵՖԵՆՍՈՆԸ  
կառուցեց առաջին յերկաթուղին  
ՍՏՈԿՏՈՆԻ և ԴԱՐԼԻՆԳՏՈՆԻ միջև—  
շոգեմեքենան ոելսերի վրա բրեց: Դա  
շատ ճիշտ եր: Զե վոր խճուղիներն

այն ժամանակ շատ անպետք ելին։  
Ծանր շոգեմեքենայի համար շատ  
դժվար եր դար ու փոսով ման դալ։  
Մեքենան տատանվում եր, փնչում,  
ինչպես խոհանոցի ամանեղենը սայլի  
մեջ։ Ցնցումներից ու զարկերից մե-



7. Ստեֆենսոնը կառուցեց առաջին յերկարուղին  
խանիզմը փչանում եր։ Աշխատում  
ելին ավելի դիմացկուն, ավելի ամուր  
մեքենաներ շինել, բայց ավելի ծանր  
եր դուրս գալիս։  
Իսկ ինչքան ածուխ եր պետք այդ

ահագին ծանրությունը վատ ճանա-  
պարհով բաշ տալու համար։

Իսկ բոլորովին ուրիշ բան ե ոել-  
սերի վրա։ Մեքենան ել թեթև կարելի  
յե շինել, այնքան ել ամրություն չի  
պահանջվում, ցնցումներ չկան։ Ածուխ  
ել քիչ կերթա։ Ուրեմն այնքան ել  
մեծ ծախս չի լինի։

Ահա հենց այս հանգամանքը շոգե-  
հանրակառքին մորթեց։ Յերբ փոր  
մեկը մյուսի յետեկից սկսեցին յեր-  
կաթուղի կառուցել, շոգեհանրակառքի  
վերջը յեկավ։ Վճնց պիտի հասներ  
զնացքին, փորը հանդարտ սահում եր  
հարթ պողպատե ճանապարհով։

Շոգեհանրակառքերի հայրենի-  
քում — Անգլիայում — նրանք չքացան։  
Ֆրանսիայում այստեղ-այնտեղ դեռ  
թափառում ելին, փորպես վերջին մա-  
մոնտներ, ծանր «խճուղային շոգե-  
մեքենաներ»։ Բայց նրանց թիվը  
շատ քիչ եր։


## ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ

Ցեվ հանկարծ «խճուղային շոգեմեքենան», հին շոգեհանրակառը, նորից իր փողը փչեց։ Նա սլացավ ճանապարհով անասելի տրագությամբ, իր յետևին թողնելով փոստային յաբուներին։

Ի՞նչ պատահեց։

Մեքենագետ Դայմերը բենզինի մոտոր կառուցեց։ Կորչի ծանր շոգեկաթսան, վնչ վառարան ե պետք, վնչ ել ածուխի արկդ։

Նայեցեք 8-րդ նկարին։ Ի՞նչ թե՛մ, պարզ ու գեղեցիկ է դարձել «կրակի սայլը»։



8. Դայմերի ավտոմոբիլը։ Սա ավելի շուրջ նման է կառի, բայ ավտոմոբիլ։

Սա Դայմլերի առաջին ավտոմոբիլն է։  
Սա արդեն շոգեմեքենա չե, այլ  
ավելի շուտ՝ կառք։ Կարծում ես թե  
ահա, ահա նրան ձիեր պիտի լծեն։

Մեքենավարը մաքուր, սպիտակ  
փողկապով։

Նա յել չի կեղտոտվում, կեղտ ու  
մուր չկան։

Հաստլիկ ճանապարհորդը բազմել  
ե փափուկ տեղում և ժպտում ե։

Մի բան միայն անհարմար ե։ Մո-  
տորը ցցված ե ճանապարհորդի վոտ-  
ների մեջտեղն, իբրև մեծ կաթի ա-  
ման — վոտ դնելու տեղ չկա։ Մոտորը  
դեռ թույլ ե, ձիուց միայն մեկ ու  
կես անգամ ե ուժեղ։ Իսկ շարժվելիս  
տատանվում ե ինչպես հին պապե-  
նական ձիասայլը։

Սպասեցեք։ Ավտոմոբիլը յերբ սկսի  
շարժվել, ել ճանապարհորդը չի ժպտա-  
կտատանի, կցնցի, հոգին կհանի։

Այն ժամանակ, յերբ մի դերմա-

նական բաղաքում — կանշտատում —  
մեքենագետ Դայմլերը կառուցեց իր  
ավտոմոբիլը, մի ուրիշ բաղաքում,  
Մաննհայմում, մեքենագետ Բինցը  
նույնպես պատրաստեց բենզինի մո-  
տոր ունեցող սայլ։ Յեվ այնպես պա-  
տահեց, վոր յերկու սայլերն ել շինվե-  
ցին միաժամանակ — նույն 1886 թվին։

Այդ պատճառով ել, իբրև ավտո-  
մոբիլի գյուտարարներ, պետք ե հա-  
մարել յերկուսին ել — և Դայմլերին, և  
Բինցին։ Բինցի ավտոմոբիլը Դայմ-  
լերի ավտոմոբիլից լավ չեր։ Գործի  
դնելու համար, հարկավոր եր յետե-  
ղից հրել։ Նրանից ել պակաս չեր թա-  
փահարում։

Վորպեսզի շթափահարեր, հարկավոր  
եր բոլոր ճանապարհները հարթել,  
կամ անիմսերին բարձեր կապել։

Արվեց և այս և այն։

Տարեցարի ճանապարհները լավա-  
նում են։

Այժմ և՝ արտասահմանում, և՝ մեզ  
մոտ, բոլոր ճանապարհները հարթ են,  
ուղիղ, ինչպես ասֆալտի մայթ:

Իսկ անիվների բարձի մասին մար-  
դիկ մտածեցին ավտոմոբիլի գյուղից  
անմիջապես հետո:


Յերեսուն հինգ տարի առաջ ֆրան-  
սիացի գործարանատեր Միշենն առա-  
ջին անգամ ավտոմոբիլի անիվներին  
ողով լցված ուետինե շիներ անցկացրեց.

Մերենան այնուհետև հեշտ դնաց  
ճանապարհով. ճանապարհորդը կարծես  
փափուկ բազմոցի վրա նստած լիներ:

Ամեն ինչ լավ եր, միայն մոտորը  
դեռ շատ թույլ եր, հաճախ փչա-  
նում եր:

Պատահում եր, վոր յեզները քա-  
շում եյին գործադուլ հայտարարած  
ավտոմոբիլը, իսկ մերենավարն ակնոցը  
գլխարկին գցած, գլխակախ նստած եր:  
Նա անելու գործ չուներ. պողագոր  
մոտորը քաշում եր ավտոմոբիլը:

Բայց ավտոմոբիլը տարեց-տարի  
դառնում եր ավելի ուժեղ և հուսալի:  
Ամենուրեք, աշխարհի բոլոր ծայրե-  
րում, մարդիկ եյին աշխատում, ձգտե-  
լով հնարել ամենալավ մոտոր: Մո-  
տորն այժմ ամեն տեղ հարկավոր ե.  
և ոգում, և ջրում, և դաշտում:



Թ. Վագի ավտոմոբիլ «Կապույտ բոշուն» — աշխարհիս  
ամենաարագավազը: Այս ավտոմոբիլի արագությունը  
Ակեմպելլը, 1933 թվին, հասցեց մի ժամում 438 կիլոմետրի:

Դայմերի ավտոմոբիլի մոտորը  
սկզբում մեկ ու կես ձիու ուժի յեր,  
հինգ տարուց հետո՝ 8 ուժի, իսկ  
այժմ Դայմեր-Բենցի գործարանի ավ-  
տոմոբիլների մոտորները 140 ուժի

յեն: Կան նաև հազար ուժի ավտոմո-  
մոբիլային մոտորներ:


Հին փոստային ավտոմոբիլներն  
այժմ վոչ վոք ել չի հիշում: Ավտո-  
մոբիլն իր շար թշնամուն ճանապահից  
վերացրեց: Կառքերն ել վերացան:  
Ոյժմ շատ քիչ կառքեր կան: Իսկ  
Նյու-Յորքում վոր ցերեկը լապտերով  
ել փնտուես, կառք չես գտնի: Այդ  
բաղարում միայն 30 հազար ձի յե  
մնացել, վորոնք մեծ մասսամբ լծված  
են կաթ վաճառողների կառքերին:  
Իսկ ավտոմոբիլներ Նյու-Յորքում  
միլոնավոր են:

Ամերիկայի մի քանի ճանապարհնե-  
րում կամուրջների վրա դիտմամբ  
անցքեր են թողնում, վոր կառքեր  
շանցնեն և ավտոմոբիլներին չխանգա-  
րեն:

Բայց կռիվը դեռ չի վերջացել:  
Այժմ ավտոմոբիլն սպառնում ե վոչըն-  
շացնել իր հին թշնամուն — գնացքին:


Ամերիկայում գնացքով ճանապար-  
հորդող մարդկանց թիվը գնալով քչա-  
նում ե, վորովհետեւ ավտոբուսով  
գնալն ավելի եժան ե:

Ավտոբուսներում կան և քնելու  
տեղեր, և հարմար թիկնաթոռներ, և  
սեղաններ: Շոփերի կողքին կա փոր-  
րիկ խոհանոց:



10. Խալական յեռահարկ տվյալներ: Գեում և Հռովմից  
Տիվոյի: Յերրող հարկամ կա ծխողների համար բաժան-  
մութեք: Երա մեջ տեղավորվում ե 88 հանապարհորդ,  
բացի տեղական վարության սենյակ ունեն:

Մեր յերկրում քիչ առաջ շատ քիչ  
ավտոմոբիլ կար: Բայց այժմ նրանց  
թիվը արագ աճում ե: Փողոցներում  
և ճանապարհներին հաճախ կտեսնենք



11. Խորհրդային՝ գործարանների նոր մեթենաները: Առջելիք՝ Յարուսլավի պետական ավտոգործարանի նիմա տնօնանոց բեռնատար: Հետո՝ Գորկովի ավտոգործարանի փոստային ավտոմոբիլը: Հետո՝ հարյուր տեղանի ավտոբուս: Դրանից հետո՝ Ստալինի անվան գործարանի ավտոբուս: Ապա՝ նույն գործարանի յերեք տոննանոց բեռնատար:

Վերջինը՝ Գորկովի ավտոգործարանի:

Նոր, փայլուն, խորհրդային յերկրում արտադրած, մեքենաներ, վորոնք կառուցվել են մեր նոր գործարաններում — Մոսկվայում և Գորկովում: Այդ գործարանները Յեվրոպայի ամենամեծ գործարաններն են:

Ավտոմոբիլային ճանապարհների ցանցն ել ե արագ աճում: Մինչև անգամ ամենավայրի տեղերում — Արևելյան Սերիբի տայգաներում և Միջին Ասիայի անապատներում — ավտոմոբիլային ճանապարհներ են զգված:

## ՄԱՆ ՅԵԿՈՂ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԸ

Նայեցեք վերջին ավբոմոբիլին, վորը  
հենց նոր են բաց թողել մի լավ գոր-  
ծարանից։ Նրա վրա վոչ մի ավելորդ  
բան չկա։ Նա նետի նման ուղիղ եւ,  
Նրա հարթ, նիկելած պատերի վրա  
վոչ մի զարդարանք չկա։ Բայց տես,  
թե վորքան հարմար եւ ուժեղ։

Համեմատեցեք նրան այն բոլոր  
ավտոմոբիլների հետ, վորոնք նկար-  
ված են այս գրքում։ Դուք կտեսնեք,  
վոր հարյուր տարվա ընթացքում ավ-  
տոմոբիլը հազարավոր անգամ փո-  
փոխվել եւ։ Նա վոտներ ուներ, բայց  
անհայտացել են։ Ուներ շոգեկաթսա,

շրացել եւ։ Տանիքի վրա խողովակներ  
եյին ցցված, այժմ չկան։ Սկզբում  
նա նման եր շոգեմեքենայի, հետո՝  
կառքի, իսկ այժմ նա նման է իրեն։  
Ցուրաքանչյուր առարկա պետք ե  
նման լինի իրեն, ունենա իր ձեր։



12. Յորք ևեղ ունեցող նարյուր ուժանի քերեվառաք ավ-  
տոմոբիլ «Կրտսենի Պուտիլովեց» գործարանի, մարկա Ա-1.



498.  
438

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավտոմոբիլ և նրա նախնիքը . . . . .	3
Տատիկը . . . . .	6
Վառների և անիվսերի վրա . . . . .	9
Չիավորների և շոգեկաթսաների կոփվը . . . . .	15
Կոփվ տոնավաճառում . . . . .	22
Փոքր յեղբայրը մեծ յեղբոր դեմ . . . . .	25
Հաղթություն . . . . .	28
Ման յեկող ավտոմոբիլը . . . . .	38



ԳԻՒՅ 20 ԿՈՊ.

М. ИЛЬИН

КАК АВТОМОБИЛЬ УЧИЛСЯ ХОДИТЬ



ԱՐՄԵՆԳԻԶ - ԷՐԻՎԱՆԻ

«Ազգային գրադարան



NL0144071

16262

4

40